

10
Ա. ՆԱՐԲԻՆՅԱՆ

ՓԱՐՍԱԴԱՆ

891.995
17-26

. ՍԱԽԵԼԳԱՄԻ .

ԹԻՖԼԻՍ - 1930

891.99 ⁴⁷ -
7-26

2011-05

Մ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

Փ Ա Ր Ս Ա Դ Ա Ն



ՍԱԽԵԼԳԱՄԻ

Թ Ի Ը Լ Ի Ս - 1 9 3 0

29 MAR 2013

8200



11692-57

Գրառնակվար 60:

Պատվեր 511:

Տիրույթ 2000:

Թիֆլիս, Ժ. Տ. Գ. Խ. Պոլ. Տրեսի 6-դ սպ.: Կեցիսովիլի փ. № 3:

Փ Ա Ր Ս Ա Դ Ա Ն

I

— Գեղն անտեր ա մնացել, տիրություն անող չկա, թալանեցին, թալանեցին, ձեն հանող չկա, ո՞վ ա իմացել ձմերուկն ես գնով ծախեն, թուրքի յեսիր ենք դառել... Գողգոթում եր կալերի գլխին, մեծ ճամբի վրա, կուլակ Փարսադանը:

Ոգոստոսի շոգն այրում եր կալվորներին: Մի կողմից արեն եր իր ալաջները թափում մարդկանց գլխին, մյուս կողմից կալի մղեղն ու փոշին եր խեղդում, ցամաքեցնում, առանց այն ել չորացած կոկորդը: Վողջ գյուղը կարծես հրաբորբոք թոնիր լինել: Հենց այդ միջոցին եր, վոր գյուղ մտան ձմերուկ բարձած յերեք սայլ: Սայապանները թուրքեր եյին, վորոնք ինչպես ամեն տարի, այս անգամ ել բերել եյին իրենց բերքը՝ փոխանակելու հացի, հավի, գետնախնձորի և այլ մթերքների հետ:

Սայլերը կանգ առան, ավելի ճիշտ՝ նրանց առաջը կտրեց Փարսադանը: Դյուղում ով իմացավ ձմերուկի գալը, վրա վազեց, վոր մի քանի հատ գնի: Փարսադանը սակարկում եր:

— Թանկ ա հատը տասներկու կոպեկ թանկ ա. կնքեք, ա խալիս, մի գին կտրենք, հետո հավասար բաժին կանենք,—կարգադրում և Փարսադանը:

—Դե, լավ, ինչ անում եք, աբեք, կալս ֆնաց, մի քիչ ել թանկ ըլի, եդ մարդիկն ել մեզ պես ռահաթ են, ամառվա շոգին դաշտում երվել-խորովվել են, ջրել, բեջարել,—լավում ե այս ու այն կողմից:

—Ձե... բանն եղպես չի, այ խեղճ ու կրակ մարդիկ, ձեր ոգուտն ու ֆնասը չեք հասկանում. սրանք ենտեղ են երվել, մենք ել արտի միջին կռացած, մեջքներիս իրիկը կոտրելով հունձ ենք արել, մեր աշխատանքը հո ջիւրը չենք թափելու,—կրկին միջամտում ե Փարսաղանը, ապա դառնում սայլապաններին.—Մեկ-մեկու վրա, մեծ ու պստիկ հատը ութ կոպեկ. թե համաձայն եք, թափեցեք սայլերը:

Գյուղացիք հավանութուն են տալիս Փարսաղանի առաջարկին, իսկ սայլապանները չեն համաձայնվում:

Ժողովուրդն ավելի յե խռնվում սայլերի գլխին շատերը վերցնում են ձմերուկները, ծանր ու թեթեւանում, սեղմում, տկտկացնում, բերանները ջրակալում ե թուքները կուլ են տալիս, նրանց թվում ե, թե արդեն ձմերուկի դիլիֆները գովացնելով ցամաքած կոկորդները, կուլ են գնում: Յերեխաները բարձրանում են սայլի վրա, ագահությունից ու ծարավից վառվում են նրանց աչքերը, շուտ ու մուտ են տալիս ձմերուկները. ամեն մեկը վորոշում ե մտքում իր բաժինը, մեծը, անպայման մեծը, այ, են չալտիկը, վորի վրա սպիտակ ու դեղին նախշերը—գոտիները պես, կարծես վորոշում են դիլիֆները: Բայց մեծերը դու սակարկում են, գնի մեջ չեն հաշտվում: Ա՛խ, այդ մեծերը...

—Ա՛խ խալիս,—ձայն ե տալիս կրկին Փարսաղանը

դե վոր ետքան մուշտարի յեք, ասում եմ երկու կոպեկ մենք ավելացնենք, երկու կոպեկ ել սրանք պակասեցնեն ու գործը քաղցր վերջացնենք, հատն երկու շահի, մենակ մի պայմանով, վոր յերեք սեւն ել վերցնենք:

Խալիսը համաձայն ե: Սայլապանները մի քիչ չեմ ու չում են անում, ապա վորոշելով նաե փոխանակելիք մթերքների գները, համաձայնվում:

—Ելի կասեք, թե Փարսաղանի ջանը ժողովուրդի համար չի ցավում... հ՛ը, բատրակ Ուսեփ, յես վոր վոտս դեմ չեյի տվել, կոպեկներդ հո թուրքի ջեբն եյին մտնելու, դու հենց ինձ ձայնագուրդ արա: Ես յերեք սեւի վրա ել ամենապակասը մի հազար ձմերուկ կա, հազար կոպեկ, հազար կոպեկ, ես քեզ—երկու հազար կոպեկ, ես քեզ քսան մանեթ, ախըր իմ գեղիցը քսան մանեթ դուր տեղը խի՞ կորչի, հ՛ը...

Սայլերը թափում են, բաժանում: Փարսաղանը գլխից վերցնում ե յերկու հատ, ջոկում, առանձին դրնում, իբրեւ վարձատրություն ճարպիկ սակարկության: Ընդունված ձե ե, վոչ վոք չի բողոքում: Իսկ ամբողջ գործողության ընթացքում, Փարսաղանը շարունակ խոսում ե այն մասին, թե ինչպես իր սիրտը ցավում ե խալիսի համար, բայց ձայնագուրդ ե, չի կարողանում գյուղի ամեն մի գործին խառնվի:

—Բատրակ են, բան չեմ ասում, դիփ ել լավ տղերք են, համա վոր գյուղի գործերից, ես տեսակ առուտուրից բան չեն հասկանում... Յաչեյկումն են, կոմմունիստ են, լավ մարդիկ են, մեր աչքի առաջ մեծացած ջահեւներն են, համա հալաանփորձ, աշխարհիս դարսողությունից անտեղյակ, մեծ-մեծ բաների

յետեից են ընկնում, ես տեսակ մանր բաներն աչքաթող անում։ համա տեսեք, եսոր գեղը քսան մանեթ ոգուտ ստացավ, հում շնորքն եր, հալբաթ վոր Փարսադանի, ձայնագուրկ Փարսադանի... Յես վոր չասեմ, խալիբը չի տեսնում...

Կան մարդիկ, վորոնք հավանություն են տալիս Փարսադանի ասածներին, կան մարդիկ ել, վորոնք ականջի քամակն են գցում, միքանի հոգի յեւ նրա հասցեյին հակառակ բաներ են փսփսում ու քթների տակին ծիծաղում, իսկ շատերն ել զբաղված են մի-միայն ձմերուկը բաժանելով։

Ամեն մեկը բերում է իր բաժնի վարձագինը, ձմերուկները տանում։ Սայլերը կամաց-կամաց պատրաստվում են մեկնելու, բայց հանկարծ, այս ու այն կողմից վրա յեն թափվում գյուղացիք, բողոքում, թե ձմերուկը խակ է, հում դղումի պես, անհամ։ զայրացած սայլապանների վրա, կամենում են վերադարձնեն ու յետ ստանան իրենց բերնից կտրած ու խակ ձմերուկին տված մթերքը։

Խոսակցությունը սրվում է, քիչ է մնում մինչև անգամ կռիվ ծագի, բայց Փարսադանը միջամտում է.

— Դե, լավ, լավ, ամոթ ա. բա չեք իմացել, վոր անկտրել ձմերուկն ու ազափ աղջիկը մեկ են... Դոնադ մարդիկ են, թողեք գնան իրենց բանին, թուրքը հո ձմերուկի միջին նստած չեր, վոր խակն ու հասածը գիտենար։

Միջադեպը հարթվում է. սայլապանները շնորհակալություն են հայտնում Փարսադանին ու սայլերը քշում, իսկ Փարսադանը նրանց յետեից գոչում է.

— Կորեք, կորեք, մին ել վոր ես գեղը խակ

ձմերուկ եք բերել, միսներդ կկտրեմ, ատամներդ դեմ կանեմ. անտեր գեղ եք գտել... Փարսադանը հալա սաղ ա, չի մեռել...

II

Գյուղում կոռպերատիվ է բացվել. մասնավոր առևտրական-չարչիներ խանութները փակվել են։ Բայց կոռպերատիվը դեռ նոր է կանոնավորվում, դեռ ես չի կարողանում գյուղի բոլոր պահանջներին ժամանակին բավարարի։ Շատ անգամ ել զգալի թերություններ են լինում. աղը կամ նավթը ժամանակին չի հասնում, տաք բումաղեյի կտորի փոխարեն թոփերով սպիտակ «բատիստ», «մադեպալամ», «նանսուկ» կամ «գրիզ-բոն» է գալիս, մնում է դարակների վրա դասավորած։ Սպիտակեղենը սովորաբար ամարանոց յեկած քաղաքացիներն են առնում, կամ ընկնում է «վոտի վրա առևտուր անողների» ճանկը, վորոնք գյուղից քաղաք են տանում և վաճառում շատ թանկ գնով։ Հասարակ լամպի ապակին կամ թեյի բաժակն սպառվում է, նորը չի հասնում, բայց եժանազին ոծանելիք—դուխի սըրվակները դեռ փայլում են դարակներին։ Ո՞ւմ են պետք...

Հենց այդ միջոցին, մեկ ել են տեսար, գյուղի ծայրին յերկու սայլ ճոճալով ներս են մտնում։ Սայլապանները դարձյալ թուրքեր են, կայսրանից նավթ, մազութ և աղ են բերել։

Փարսադանը կտրել է սայլերի առաջը, սակարկում է «գյուղի համար», գոռգոռում է գյուղով մին.

— Թալան ա, թալան... Շան պես հոտ են տուել, վոր կոռպերատիվում նավթ ու աղ չկա, բերել են, թե

գեղը թալանեն. չառնեք, կոռպերատիվի գնից ամեն մի գրվանքին յերեք կոպեկով թանկ են ծախում...

Սայլապանները բացատրում են, վոր շատ դժվար է ձարվում նավթը, քրեհը շատ թանկ է նստում, և այլն:

Գյուղացիք վրա յեն թափվում, խավարի մեջ են մնացել, գոռում—գոչումն ընկել է: Սայլի անիմները ճոճոռում են, լծկանը դժվարությամբ է քաշում սայլը, շատերի ուսն ուռել է, ինչ գնով ել լինի, ուզում են առնեն մագուլթը:

— Ձեզ ասում եմ, մաշկում են ես թուրքերը, կողոպտելու յեն յեկել, խելք չունեք, առուտուրից բան չեք հասկանում, կացեք գինը պակասեցնենք, կամ համբերեցեք, եսոր-եզուց կոռպերատիվը կստանա, շատ ել յես կոռպերատիվի անդամ չեմ, յես հո խալխի համար ցնւմում եմ,—գոռգոռում է Փարսաղանը:

Գյուղի ամեն ծայրից նավթի ու մագուլթի ամանները ձեռներին բռնած վազել, յեկել են մեծ ու փոքր, դժվոցն ընկել է մեջները, կամենում են շատ վերցնեն, պաշար ունենան, վաճ թե կոռպերատիվն ուշ ստանա, վաճ թե ամենքը տանեն, իրենց բաժին չընկնի: Ամեն մեկը մասնավոր սակարկություն է սկսում սայլապանների հետ, իսկ նրանք պինդ կանգնած են իրենց ասածի վրա: Հարցնող ել չկա, թե ովքեր են, իրավունք ունեն ծախելու, թե վոչ, վոթոեղից կամ ինչ ձանապարհով են ձեռք բերել ապրանքը:

Փարսաղանը կրկին ծվում, ձչում է.

— Ետպես եք անում է, վոր գեղի տունը քանդում եք, ինչ անմիաբան խալխ եք, կացեք մասլա-

հաթով գինը պակասեցնենք, շատ եք հարձատ, վոր ուզում եք աշխատանքներդ դեն ածեք...

Ժողովուրդը հուզվում է, իրար անցնում:

Փարսաղանը յետ է տալիս շատերին, հեռանում սայլերի մոտից, ապա կտրուկ առաջարկում սայլապաններին.

— Մեր կոռպերատիվի գնից մեկ ու կես կոպեկ ավելով թե տալիս եք՝ տվեք, թե չե, վեր կացեք կորեք, ամեն մի գրվանքին կես կոպեկ քրեհ, կես կոպեկ աշխատանք, կես կոպեկ ել են փողի շահը, վոր սրանից-նրանից պարտք եք վերցնել ու ապրանք առել: Լավ չեմ ասում, ա խալխ:

Սալիք համաձայն է: Սայլապանները չեն համաձայնվում և ուզում են յետ գնալ: Ժողովուրդը շվարած է, հուզված ու հուսահատ:

— Գնացեք, կորեք, թալանչի հարամզադեք, մենք խավարում մի քանի որ ել կմնանք. կրակի լիսով հաց կուտենք:

— Փարսաղան, կես կոպեկ ել տվեցանք,— ձայն են տալիս այս ու այն կողմից:

— Ձե, թող կորչեն, յեկել են վոտը կապած հավ գտել, ուզում են փետրահան անեն. ես ասեմք թե իմ ուժը պատեց, յես առա, բա ես ինդճ քյափին ինչ տա, իմ սիրտը սրա համար ա ցավում, սրա համար... և թեից բռնած առաջ է հրում մի աղբատի յերեխայի:

Սայլերը թեքվում են դեպի յետ. մի քանի հոգի նրանց առաջը կտրում են, չեն թողնում: Փարսաղանը նրանց նախատում է.

— Մի հաշիվ արեք է, հաշիվ, ա խեղճ վողորմի-լինեք, կես-կես կոպեկ կորցնելով, գեղը են պակասը

հինգ չերվոն ա կորցնում. հա հինգ չերվոնը կտանք, մեր դպրոցի կրամիտը կփոխենք, խելքներդ հտքան ել չի կտրո՞ւմ...

— Ձհանգամը դնա շկոլն իլ, դատն ել, խավարի մեջ ենք մնացել, — ձայն են տալիս ամեն կողմից:

— Դե, յես փիս մարդ եմ, ըն՛ը ձեռներս լվանում, յես եմ քաշվում, ինչ կուղեք արեք, առանց են ել ձայնազուրկ եմ, հսքան խոսալս ել ավելորդ ա, — կեղծ դժգոհությամբ ասում է Փարսաղանը և մի կողմ քաշվում:

Բայց այս անգամ սայլապանները պայման են դնում, վոր ամբողջ ապրանքը վերցնեն, վորպեսզի այլևս ուրիշ գյուղ չգնան: Գյուղացիք տարակուսում են. նրանք գիտեն, վոր նավթն ու մազութը չեն մնա, բայց աղից են վախենում. կոոպերատիվում աղն ես առավոտ է վերջացել, նրա պահանջը քիչ է, իսկ մի սայլը միայն աղով է լիքը:

— Տեսա՞ք... հրճվանքով թնդում է Փարսաղանի ձայնը, տեսա՞ք, վոնց են ուզում խուզե՞ն... Դրանց հախիցը Փարսաղանը կգա, Փարսաղանը. դեսը կացեք:

Փարսաղանը նորից մոտ է գալիս ու գոռում սայլապանների վրա.

— Ես գեղում հենց գիղաք մարդ չկա... յեկեկ եք, թե քյասիր տկլուրե՞ք... Պայմանը—պայման ա, վոնց վոր ասել եմ. գրվանքին մեկ ու կես կոպեկ. զիփ կվերցնենք, թե խալիսը չտանի, մնացածը յես կառնեմ, նրա ջուղաբը յես կտամ...

Սայլապաններն այս անգամ համաձայնվում են:

— Ա՛յ, որհնվի քու ծնունդը, Փարսաղան, — գոփում են Փարսաղանին:

Գյուղացիք մըջնանոցից դուրս յեկած մըջյուռների պես տուն են կրում նավթը, մազութը, աղը...

Փարսաղանի դեմքը փայլում է:

— Տղերք, Փարսաղանը վոր չըլեր, կես-կես կոպեկնիս դեն ելինք ածելու հա... լսվում է այս ու այն կողմից:

— Հա բա... Թո՛ղ գնան, վորտեղ իրանցն ասեն, իմն ել հնտեղ պատմեն, — քմծիծաղով, ինքնաբավական ասում է Փարսաղանը մի քանի անվայել բառեր շըպըրտելով սայլապանների հասցեյին:

— Մարդն աշկարա գեղի պաշտպան ա, ելի, — փսփսում են մի քանի միամիտներ:

III

Գյուղում կաշվի սով է, կաշի չի ձարվում. շատերը բորիկ են, շատերն ել մաշված տրեխները կարով—կարկատանով իրար են անում, մի կերպ վոտներին կապում, յոլա դնում. բայց ել գիմանալ չի լինում: Մի քանիսը չստեր են առել, վոր փորձեն, թե չուտը տրեխի տեղը կըռնի՞... Ձե, չի բռնում: Նախ շատ թանկ է և շուտ է մաշվում, յերկրորդ՝ անհարմար է հնձի ու խոտի ժամանակ: Մարդիկ սոթ են տալիս, վեր ընկնում. չստի տակը կանաչից լոսվում է, դառնում սղդան. իսկ յեթե այդ չորացած միջոցին մի անձրևի տակ է ընկնում, պրծնվ... ել տերը չես. կարերը կանգվում են, տակի կաշին պոկվում է ու վոտի տակ ծլիում:

Ուրիշ է տրեխի բանը. ամուր է, կղով է կարած. յեթե չորանում է, լոսվում, իսկույն կարող ես թըջել, յեթե տավարի կաշվից է, միշտ փափուկ է մնում, իսկ

յեթե գտնելի կաշվից ե, իրիկունները թրջոց դիր, առավոտն ելի են տրեխն ե, վոնց վոր առաջին որն ես հագել, յերեսն ել կաշվից չի՝ չստի պես, վոր վոտդ քրտնի ու երվի, թեկ ե, տրեխտան, հով ե կենում վոտդ։ Մի խոսքով ամեն բանով հարմար ե ունչպար գյուղացու համար. եժան ել ե, անխնա կարող ես քարշ տալ ամեն տեղ, վոտդ չստի պես չի հարում ու թեթե ե։ Կղահան ելավ, քանդվեց, ինքդ կարող ես կարել, կարկատել, բաշմաղչու մոտ տանելու կարիք չկա, վոր ամեն մի դատարկ կարի համար են պակասը մի քսան յերեսուն կոպեկ ե առնում։

Կոոպերատիվը կաշի չի ծախում. ինչո՞ւ. հայտնի չե, վարիչը չի կարողանում պատճառը հասկացնի. չեն ուղարկում, չի ծախում, ահա միակ առարկությունը։

Գյուղում միս ել չկա, ապրանք չեն մորթում, մանավանդ ամառը. թե պատահմամբ մի յեղը կամ կով քարից գլորվում, վոտը կամ մեջքը կոտրում ե, վրա յեն թափվում մաս-մաս անում, տանում ուտում. տեղը վիզը ծուռ կանգնած նայում ե, թե ինչպես են մաշկում իր աշխատավորին կամ յերեխաներին կերակրողին։ Կաշին ել են բաժանում, բայց մի գյուղին մի տավարի կաշին ի՞նչ անի... Իսկ յեթե ապրանքը ցավից ե սատկել, պետապի գործակալն ու անասնաբուժակն արդելում են մոտենալ սատկած անասունին, այրում են, կամ գյուղից դուրս, մի հեռու տեղ խորը հոր փորել տալիս, հորում։

Կոոպերատիվը միս չի ծախում, ապրանք չի մորթում։ Մի քանի անգամ փորձ ե արել, միսն ամբողջովին չի սպառվել, փնաս ե արել կոոպերատիվը, այժմ հրաժարվում ե, մանավանդ, վոր գյուղը շրջանի

կենտրոնի գյուղը չե. ուր ծառայողներ, պաշտոնյաներ շատ կան, յեկվոր, վոչ տեղացիներ, վորոնք ե մեծ մասամբ սպառում են։ Կոոպերատիվն այնտեղ, շրջանի կենտրոնում, փուռն ել ե բաց արել, հաց ել ե ծախում. դե, այնտեղ փոստ կա իր ծառայողներով, շրջանային միլիցիան ե, շրջ. գործկոմը, հիվանդանոց կա, դատավորն ու անտառապահությունը, գյուղբանկն ու վարկային ընկերությունը, կուսակցական մարմիններ ու զպրոցներ կան, և այլն։

Իսկ այստեղ, գյուղը թեև մեծ ե, բայց ծառայողներն անհամեմատ քիչ են, շատերը տեղացիներ. գյուղացիների մեծ մասն ել միս չի առնում, մի կերպ անց ե կացնում որը, հավից-ճուտից մորթելով։ Բացի այդ, կոոպերատիվի միսը թանկ ե ծախվում, ավելի թանկ, քան յերբ ծախում ե հաճախ ֆարսաղանը. մանավանդ, վոր նա ապառիկ ել ե բաց թողնում, յերբեմն ել «հոգու վարձքի» համար մի քանի խեղճերի, բատրակների ընտանիքի միս ե ուղարկում ձրի։ Զարմանալին այն ե, վոր ֆարսաղանի մորթած ապրանքի միսը յերբեք չի մնում։ Դադանիք կա այստեղ. նա ապրանքը վոտի վրա յե ծախում, դեռ չմորթած՝ արդեն բաժին ե արված լինում։ Շատ մասն ինքն ե վերցնում, վոր գյուղի ազդեցիկ մարդկանց հյուրասիրի, այս կամ այն պաշտոնյային պատիվ անի։

Փարսաղանը պաշտոնապես մսի կամ մանավանդ կաշվի առևտրով չի զբաղվում։

— Անտեր մնա սովորությունը, — ասում ե Փարսաղանը, — առանց մսի չեմ կարողանում ապրեմ, ինձ համար եմ մորթում, ընտանիքս ել մեծ ե, դե, ընկեր — հարեան ել, վոր գալիս են, խնդրում, հո չեմ կարող

ափազ անեմ, սրտիցս խեղճ մարդ եմ, տալիս եմ, տանեն, կողքիս քյասիբին ել՝ իմ կարյաց չափով բաժին եմ դարկում, վոր աչքը իմի վրեն չմնա, իմ խորովածի հոտը վոր քիթն ընկնի, սիրտը խուտուտ չզա ու ինձ չանիծի... Դե, ետպես եմ անում, բարի գործ ա, թե չար՝ վերինը կջոկի...

Իսկ ինչո՞ւ միսն ավելի եժան ե նստում:

Ապրանքը վոտի վրա գնահատում են, մոտավորապես քանի փուլ միս լինելը վորոշում, մսի գինն էլ նշանակում ու մորթում, հավասար բաժին անելու պայմանով, վոր վիճակով՝ սրան—կամ նրան ե ընկնում:

— Կաշին ինձ,—ասում ե Փարսաղանը,—միսը ձեզ, յես ել յերկու ընկերի բաժին կվերցնեմ, ընտանիքս մեծ ե, գնացող-յեկողս շատ:

Համաձայնվում են:

Փարսաղանը կաշին աղով ու շիրով թրծում ե, փռում, չորացնում ե ծախում: Ծախել ասելն ել «հանցանք ե», Փարսաղանը հո կաշվի առևտրական չի, «հալալ աշխատավոր ա, հողին կպած, մաճը ձեռին»: Իրոք, նա ինքն ել վար ե անում, բատրակ չի պահում այժմ, մտադիր ե ձայնը վերականգնելու...

Յեմ ինչ... Վերջին հաշվով դուրս ե գալիս, վոր կաշին ինքը միայն ավելի թանկ ե, քան վողջ-առողջ, վոտի վրա կանգնած անասունը: Այս բանը լավ գիտե Փարսաղանը, նման այն գողերի, վորոնք այս կամ այն գյուղի հանդից ապրանք են քշում, հեռացնում, ապա մորթում, միսը թողնում շներին ու գայլերին, իսկ կաշին հետները տանում, ե՛րոնվելուց են ազատ, ե՛ կաշին թեթե ե ու պահելը հեշտ:

Ամեն կիրակի առավոտ, յերբ արևը գլուխը հա-

նում ե հեռու հորիզոնից ե լիզում սարերի զագաթները, Փարսաղանի դռանն ապրանք ե մորթվում: Գյուղացիք թափվում են, վորը կանխիկ, վորն ապառիկ, տանում են միսը, միշտ ջահել յերինջի կամ կովի միս, առողջ ու համով. իսկ կաշին ծալած-դարսած ե տանը: Հաճախ ուրիշ գյուղերից ել են գալիս Փարսաղանից կաշի գնելու, Ինքը դաշտում կամ այգում աշխատա՞նքի յե, տանեցիք են վաճառում:

— Ե՛լի շեն կենա Փարսաղանը, վոտս բորիկ, քան ին տալով քարխե՞ծ եր դառել, տանս ել փող չկար, գնացի, մի անգամ բերանս բաց արի, լեզուս պոնգովս կալա, մի ջուխտ կաշի տվեց, իսկի չհարցրեց ել, թե յերբ եմ հախը տալու:

— Մարդը կարիք հոգող, ժողվողի ցավ հասկացող մարդ ա, ինքն ել մեզ նման հողի հետ քաշ եկող աշխատող, թե ի՞նչն ա պատճառը, վոր ձայնաղուրկ են արել, բան չեմ հասկանում...

— Անձնական հաշիվ ա, ելի, թե չի, նրա պես քյասիբի միջքին կաղնող մարդ կա... միտդ ա ձմերուկը, միտդ ա նոթն ու աղ՝ը... բա իմ մի մարդ ել ա չեր խոսում, նա դոշը դեմ տված հնքան արավ վոր կոտրեց...

— Բա մենակ ետ ես ասում... ես գեղումն ինչքան տնանկ աղքատ կա, նրա կաշին ա հագնում, նրա դարկած միսն ա ուտում, անփող, թնհախ...

Խոսում են այսպես գյուղացիները: Խոսում են ու որ-որի վրա ավելի բարձրացնում Փարսաղանի հեղինակությունը: Խոսում են ու նախապատրաստում մաքերը, վոր Փարսաղանի ձայնը վերականգնեն, ապա անցկացնեն գյուղխորհուրդ: Ո՞վ գիտե, գուցե մի որ ել նախագահ ընտրվի...

«Այ սիկ, սիկ, վա՛խ սիկ, սիկ,
 Զա՛ն սիկ, սիկ, սրկնո՛ւր,
 Առանց քեզ չեմ կարող
 Յեռապրեմ մեկ ուր»...

Յերգում ե գինու նոր յերգը Փարսադանը, յերգում ե խաղողով լի սալի զլխին նստած, ու քշում յեզները:

Աշուն ե, լիլկան աշուն: Հունձ ու խոտը, կալ ու կուտը վերջացել ե: Գյուղացին գոհ ե բերքից, ապահով ե: Սերմացուն առանձնացրել ե, Փոկ-ի սերմագործով դառել աշնանացանի ու գարնանացանի համար. մնացածն ել տանում ե ջաղաց, վոր ձմեռվա ալյուրի պաշարը տանն ունենա: Ով վոր այգի ունի — քաղում ե անմշակ, թթու խաղողը, տանձ ու խնձորը տուն կրում, իսկ ով այդ աշխատանքից ազատ ե, անտառից փայտ ե բերում կամ արդեն չուլթ ու գուլթան ե լծել, աշնան վարն սկսել:

Գյուղի խաղողից լավ գինի չի ստացվում, թթու յե լինում, ինչպես իրենք են ասում — «ղկաջուր»: Շրջանն այգեգործական չե. խաղողի վրա ուշք չեն դարձնում. յեթե մի բան ել ստացվում ե խաղողից, դա — ջեջան ե, վորից ողի յեն քաշում տնային ձեով: Այդքան:

Փարսադանը միշտ լավ գինի յե ունենում: Գյուղից ցած, մոտ 10—12 վերստի վրա թուրքեր են ապրում, նրանց այգիների խաղողը համով ե, քաղցր, այդ խաղողից ստացվող գինին անուշ համ ու բուրմունք ունի: Թուրքերը գինի չեն շինում. նրանք լավ խնամում

են իրենց այգիները և խաղողը դեռ վորթի վրա ծախում: Ահա այդ այգիներից մեկը կամ յերկուսն ե, վոր առնում ե Փարսադանը, քաղում, տուն բերում, ապա մզում, լցնում իր կարասները: Յրտին դիմացող խաղողներից ջուրում ե բանդալ առնում, կախում սառը մառանում, վոր յեթե գյուղում ձմեռը հիվանդների սիրտն ուզի, իր «հոգու վարձքի» խաթեր ուղարկի նրանց: Խաղողը յերբեք չի ծախում Փարսադանը, մեղք ե, հիվանդ մարդուն պետք ե ոգնել: Գյուղացիք գիտեն այդ բանը, շատերը ճնշվում են, չեն ուզում ձրի վերցնեն, ուզում են մի բանով վարձահատույց լինեն, լավուրյան ֆակից դուրս գան, և... մեկ ել կտեսնես հիվանդի տերը, սովորաբար մայրը կամ կինը, փեշի տակ մի հավ դրած, բերում ե Փարսադանի տուն, մի կողմ կանչում նրա կնոջը կամ հարսին, կամաց փսփսում ականջին, վոր հավը վերցնի ու մի քանի ձիթ խաղող տա հիվանդի համար: Հիվանդի տերը հավի գլուխը ծռել, վորոք ել ե, դրել ե թևի տակին, վոր ձեն չհանի, վա՛յ թե հանկարծ Փարսադանն իմանա, կբարկանա, կկովի, վոր իր «վարձքը ջուրն են գցում, իր լավությունն ուզում են հավով առնեն»: Բայց և այնպես հավերը մտնում են նրա հավանոցը: Մի հավին տալիս են յերկու կամ յերեք ձիթ խաղող: Այս ամենը կատարվում ե Փարսադանի «աչքից ծածուկ», գողունի, Փարսադանը «չգիտե » այդ մասին:

— Ա՛քիր ջան, քե՛ մատաղ, — ասում ե հավ բերողը, — ուրիշ բանով կարող չեմ լիս Փարսադան դայու լավության տակից դուրս գալ, չենք կարող չիմանա, կմորթես իրան կտաս, թող ուտի, իմ հիվանդն ել եր-



վում ա, թող նրա բերած խաղողն ուտի, հովանա. թե սաղ մնամ քեզ համար խալիչի թել ել կմանեմ...

Իսկ յեթե Փարսադանն ինքն ե իմանում հիվանդի մասին, անմիջապես կարգադրում ե, վոր խաղող տանեն:

— Բյասիբ մարդ ա, ձեռը բերանին չի հասնում, մի տուն քյուլփաթի տեր ա, մեղք ա. մեղք ա, կմեռնի յերթիմնին գլխներիս կմնան, խաղող տարեք, թող ուտի, լավանա:

Որհնում են Փարսադանին, նրան որ—արե ու կյանք մաղթում, մանավանդ չքավորները, վորոնք ավելի շատ են հիվանդանում, և ավելի շատ են կարոտ դրսի ոգնության:

Փարսադանը գիտե, վոր այժմ նրանցն ե խոսքը, նրանց ձեռին ե իրավունքը, նրանք միայն կարող կլինեն վերականգնեն իր ձայնը, ուստի պետք ե նրանց գրավիլ, նրանց սիրտը շահել:

Յեւ շահում ե նրանց սիրտը...

«Ա՛յ սիկ, սիկ, վա՛խ սիկ, սիկ,
Ջա՛ն սիկ, սիկ, քվնո՛ւր,
Առանց քեզ չեմ կարող —
Յես ապրեմ մեկ ուր»...

Փարսադանի տան ներքնահարկի, այսպես կոչված մառան-պաղվալի առաջ, սրահի տակ դրված ե փայտից շինած մի լայն ու յերկար նով, շիրա մզելու նով, վոր նման ե վոչ խորը, յերես տաշտի: Յետեի կողմը հարմարեցրած ե քթոցի համար: Քթոցը մեծ ե, նրա մեջ կտեղավորվի մոտ հինգ փուլ խաղող, ել ավելի: Փարսադանը շալվարը յետ ե ծալել մինչև ծնկ-

ները, մաքուր լվացել վոտները և սրուքները, պատրաստ կանգնած, քթի տակ մրմռում ե գինու յերգը: Կանայք բերում են հակինթի պես փայլող դեղնավուն խաղողը, լցնում քթոցի մեջ: Փարսադանը ցատկում ե, յերեսը խաչակնքում, «յա տեր աստված» գոչում ու մտնում կիսով չափ լի քթոցը: Քթոցի ծակոտիներեց պզպզալով դուրս ե ժայթքում բաց վարդաշրի նման հեղուկը և նովի միջով հոսում, լցնում քթի կողմը դրած մեծ պղնձի մեջ:

«Ո՛վ գինի, յեքե քեզ խմի քաղն,
Կասի—խում եմ հրեշակաց բարբառն.
Ո՛վ գինի, յեքե վոր քեզ խմի լալն,
Կսկսի մարդկանց մեջ նա քառոզ սալն:
Ո՛վ գինի, յեքե քեզ խմի քան հավրն.
Աղվեսի հեռ կանի համարձակ դավրն.
Ով գինի, քե վոր քեզ խմի ավանակ,
ձարսասան կրկնի անբուղթ, անքանաք»...

Հին յերգ ե, շատ հին, յերգել ե վոմն Սեյադ. յերգել ե շատ յերկար, գինու գովքն արել: Փարսադանն այսքանը գիտե միայն. յերգում ե, զվարճացնում հաբեաններին, ինքն ել ուրախանում:

— Ե՛հ անտեր միա սովորությունը. սովորել եմ առանց գինու չեմ կարում հաց ուտեմ,—ասում ե Փարսադանը.—ավելորդ ծախս ա, համա ի՞նչ անեմ... Գնացող-յեկողի առաջ ել մարդու յերես պարզ ա անում. գինին վոր գալիս ա, ել յերեսդ չի կարմրում, Կն ա ինքը կարմիր ա...

Լցնում ե Փարսադանը կարասները, վորոնք հո-

բած են. հողի մեջ գինին սառն է մնում, կարասն էլ գինու ուժից, գաղից չի ճաքում:

Գյուղում Փարսաղանը միայն գինի ունի. մաքուր, անխառն, անարատ գինի. համով, գերմանական գաղութի գինու պես չի, հազար ու մի բան խառնած, թանձր, տոխպ: «Կալոնի գինին վորտեղ, Փարսաղանի գինին վորտեղ...», այսպես են ասում գյուղացիք: Փարսաղանը գիտե գինու գաղտնիքը, գիտե թե ինչպես պետք է պատրաստի. նա պատանի հասակում Գյանջա քաղաքումն է ապրել, Ծորերիցն է սովորել:

Կոռպերաւիվը գյուղում գինի չի ծախում. բայց գյուղացիք գինի յեն խմում, յերբեմն հյուրասիրում միմիանց, իսկ յերբեմն ել—հենց տրամադրություն են ունենում խմելու: Փարսաղանը «գինի չի ծախում», բայց չի յել կարողանում «խաթրները կոտրի», շատ վոր զոռ են անում, ուղարկում է կնոջ մոտ. «գինու խազեյինը մեր հարսն ա, դուք գիդաք—նա, գնացեք, ինչ ուզում եք արեք», ասում է Փարսաղանը և ավելացնում, «խառն աշխարհ ա, խառը ժամանակ, մին ել են տեսար, անունս միկիտան դրին ու խայտառակեցին. նալոգն ել հո իր կարգին, ենքան վզիս կդնեն, վոր առանց իմ իսկ ձեռով ինձ համար մղած գինու համը տեսնելու, կհարբեմ, կզժվեմ, սարերը չոլերը կընկնեմ»...

Պատահում է, վոր գյուղգործկոմի նախագահի կամ կոմբջիի քարտուղարի տուն հյուր է գալիս: Սովորություն է, հնուց մնացած սովորություն, վոր տանտերն անհարմար է զգում հյուրի առաջ, յեթե սուփրի վրա ողի կամ գինի չի յերևում, կամ ինչպես գյուղացիք են ասում—«առյուծի կաթը» (ողի), կամ «Պիղատոսի արտասուք» (գինի) չի լինում:

Փարսաղանի աչքից վոչինչ չի վրիպում, նա չի սպասում, վոր գինու յետեից իր մոտ ուղարկեն, ինքն է ուղարկում մի քանի շիշ, տանողին պատվիրելով.

— Կտաս կնկանը, ծածուկ, ինքը չիմանա, կընկանը կասես, թե մարդն առել, ուղարկել:

Նախագահը կամ քարտուղարը, իհարկե, շնորհակալ են, գոհ, լավությունը նկատի կունենան: Իսկ յեթե հաջորդ որը խոսք է բացվում վարձատրության մասին, Փարսաղանը վիրավորվում է, նեղանում.

— Հենց գիտենանք իմ տուն եյին զոնաղ յեկել, յես քեզանից փող պետք ա առնելի՞ր բա ամոթ չի... մա ել մի՞ր որվա հարեանն ենք...

Հարեանության և բարեկամության կապերը դեռ շատ են ուժեղ, շատ են ամուր. գասակարգային ներհակությունը դեռ չի կարողանում խորտակել գյուղում այդ կապերը: Յեվ... տրամադրությունները մեղմանում են Փարսաղանի նկատմամբ. նրա ձայնը վերականգնելու հարցը գրեթե ապահովված է: Այդպես է կարծում գոնե ինքը՝ Փարսաղանը:

Ինչ վերաբերում է բատրակներին, բատրակիւմի անդամներին, վորոնք ավելի խիստ են վերաբերվում և կուլակների արարքները քննադատում, Փարսաղանը նրանց ել է կարողանում իր թակարդը գցել:

Գյուղում ո՞վ չի վորեն ազգակցական կապով կապված... Ազգական են կամ բարեկամ, խնամի, քաւոր, սանհեր, փեսա, աներ, կամ այս ինչ ու այն ինչ պորտով իրար մոտիկ: Նման կապերն ավելի յեն հիշվում, յերբ մարդու տեղը նեղ է, վորեն կարիք ունի: Հենց այդ կապերի նուրբ լարերն է շոշափում Փարսաղանը և հարմար առիթը բաց չի թողում ձեռից: Հրավիրում

և, հյուերասիրում, և շատ հաճախ Փարսադանի տանը, կուլակի ձայնի հետ միասին, հնչում է նաև բատրակի ձայնը: Խմում են միասին Փարսադանի անուշ, «անմահական» գինին ու յերգում, բաժակներն իրար չըխկացնելով:

Ա՛յ, սի՛կ, սիկ, վա՛խ սիկ, սիկ,
 Զա՛նց սիկ, սիկ, սրկնո՛ր,
 Առանց քեզ չեմ կարող—
 Յես ապրեմ մեկ ուր...
 Տկնո՛ւր, գրկումս կպահեմ նազով,
 Կկոնծեմ գիւլից—գավարով, պոզով:
 Ա՛խ սիկ, սիկ...
 Պիպիկդ նախեմ արծաթով, վոսկով,
 Կյանքս քեզ մասադ կանեմ մի խոսով
 Ա՛յ, սիկ, սիկ...
 Տկնո՛ւր առանց քեզ ես չեմ ուրս.
 Վերցնեմ գավարս, դասարկեմ փորս:
 Ա՛խ, սիկ՛ սիկ...» յեվ այլն:

V

Փարսադանը մի «հոգևորդի» ունի իր տանը: Դա—նրա հորաքրոջ վորը տղան է—Գարսոն: Փարսադանի հորաքրոջ մահից հետո Գարսոն մնաց կլոր վորը, անհեր, անմեր, քույր ու յեղբայր ել չուներ, դրա համար ել գյուղացիք նրար «կենտու Գարսո», այսինքն՝ մենակ Գարսո եյին ասում: Փարսադանն «իր հոգու վարձքի» համար Գարսոյին վերցրեց իր մոտ, նրա վարելահողերն ու պարտեզը միացրեց իրենին, ու վորը Գարսոն, վոր արդեն մոտ 7 տարեկան եր, հոտաղության

հասած՝ ճիպտը ձեռին Փարսադանի վար ու ցանին եր, նրա ապրանքի վրա, հորիքի լծանը թառած, կամ սարում հորթեր ու զառներ եր արածացնում:

Գարսոն մեծացել է արդեն, մոտ 19—20 տարեկան ամբաղաժմ յերիտասարդ է դարձել: Նա Փարսադանի տունը շալակած ման է ածում, նրա սար ու դաշտի դործը կառավարողը նա յե: Տարիներ շարունակ Գարսոն աշխատել է, միշտ զբեղած իր անձնական հաճույքներից ու բավականություններից: Թե մի լծկան, թե նա: Փարսադանը նրան դարձեց չի ուղարկել, վոր գոնե գրագետ ել է դառնա: Տարին բոլոր քրտինք է թափել Գարսոն, բայց ելի ինքն է պարտական Փարսադանին: «Զե՛ վոր յեթե Փարսադանը չլիներ, ինքը վորը, քաղցած ու տկլոր, սովից կմեռներ»—մտածում է Գարսոն: Դեռ յերկար տարիներ պիտի աշխատի Գարսոն Փարսադանի տանը, վոր նրա արած լավության տակից դուրս գա: Զե՛ վոր Գարսոն ոտար չե, նա Փարսադանի տան անդամներից մեկն է համարվում: Յերկու տարի յե արդեն, ինչ Փարսադանը խոսք է բաց արել Գարսոյին ամուսնացնելու մասին: Փարսադանը մտադիր է մի լավ աղջիկ գտնի, պսակի Գարսոյին, մի բան ել տա նրան, բաժանի, ուղարկի իր հոր ավերակ տունը, վոր հոր ոջախը ծխի: Բայց... այս ամենը միայն խոսակցություն է առ այժմ, Փարսադանը «հարմար հարսնացու չի ճարում», իսկ Գարսոն ել ամաչում է խոսք բանալ այդ մասին:

Գյուղում ամենքն ել գովում են Փարսադանի արարքը, վոր Գարսոյին պահել մարդ է շինել, իր հարգատ վորդու պես մեծացրել ու խնամք է դրել վրան Սակայն... այլ կարծիքի յե բատրակով: Նա գտնում

ե, վոր Փարսադանը տարիններ շարունակ շահագործել ե Գարսոյին, ծծել նրա արյուն — քրտինքը: Նա գտնում ե, վոր Փարսադանը յեթե բատրակ չի պահում, պատճառն այն ե, վոր Գարսոն հենց ինքը բատրակն ե նրա: Բատրակիմը կանչել ե Գարսոյին, հայտնել իր կարծիքը, առաջարկել վոր Գարսոն կողեկտիվ պայմանագիր կնքի Փարսադանի հետ, կամ՝ անգատվի նրա լծից, ստանա իր բաժինը և մտնի գյուղում նոր կադմակերպված կոլեկտիվ տնտեսութան մեջ: Բատրակիմը պահանջել ե նաև, վոր Գարսոն անդամագրվի պրոֆմիությանը, գնա լիկկայան և վերացնի անգրագիտությունը:

Գարսոն պատմել ե այս ամենի մասին Փարսադանին, խնդրել ե, վոր մի ճանապարհ ցույց տա, իբրև մեծ, իբրև տան գլուխ:

— Դու գիտես, բնիւմ,—ասել ե Փարսադանը,— յես քեզ հետ ինչ պայման կապիմ, հերն ել վորդու հետ պայման կկապի՞... Ինչ վոր ունեմ, քոնը չի՞... դու հո բատրակ չես, ես տան տերն ես: Գիր սովորելն ել... դու գիտես, կուզես սովորի, կուզես թո՞ղ, ձեռք բռնող չկա, համա ինձ վոր հարցնես, ավելորդ բան ա. իմ հերն անգրագետ եր, համա ինձանից համ խելորդ եր, համ հարուստ:

Շվարել ե Գարսոն, չի կարողանում վորոշել իր ոգուտն ու փնասը: Չի իմանում, թողնի՞ Փարսադանի տունը, թե՞ վոչ. ուր գնա դատարկ ձեռով: Իսկ բատրակիմը պնդում ե իր ասածի վրա, պահանջում ե, վոր Գարսոն կտրի իր կապերը կուլակի հետ, իր հաշիվներն ուզի Փարսադանից: Բատրակիմի հաշվով Փարսադանը պարտավոր ե Գարսոյին կն պակասը մի

զույգ յեզը, մի կով ու մի ձի տալու. ինչ վերաբերում ե վարելահողին, բատրակիմն ինքը կառնի ու կմիացնի կոլեկտիվին:

Գարսոն այս ամենի մասին պատմում ե Փարսադանին, պատմում ե կմեմալով, յերբ հարցը վերաբերում ե հաշիվներին:

— Ի՞նչ հաշիվ... զուսպ դայրույթով ասում ե Փարսադանը,— յես աշխատել եմ քեզ պահել, մարդ չինել, հալա ելի պարտականը դու չես, յես եմ .. Կրակից ու ջրից աղատել եմ, փորդ կուշտ պահել, ջանդ տաք, իմ բերնիցը կտրել, քեզ եմ տվել, վոր ուտես, ապրես, լավությունս գիտենալու տեղ, ո՞՞ր պես տաքացրել եմ ինձ ես ուղում կծե՞ս... Ես տանը հավան չեմ, հրեն հորդ քանդված տունը, գնա թե տղա յես, նորոգի, ապրի...:

Գարսոն բացատրում ե, թե ինքն իսկի յել մտադիր չե հեռանալու, բատրակիմն ե եղպես բաներ ասում:

— Բատրակիմը յեթիմ ա մեծացրել, վոր հիմի զլխիդ տեր ա կանդնում... Հեռու կաց ետ բատրակիմից, կամ տանիցս հեռացի, հենց կլմանամ անառակ զավակ ես: Հեյ գիդի հա... Թուրքը դրուստ ա ասում, թե «յեթիմ, ում հերը կանիծես», «ինձ պահողի» — ասել ե յեթիմը... Միաժամանակ ախ ու վախ ե անում Փարսադանը, անիծում իր բախտը, որենքը, ժամանակը... Անհանգիստ ե. լավ նշան չի, վոր բատրակիմը խառնվում ե ես գործերին,—մտածում ե նա:

Գարսոն մենակ փնացած ժամանակ, հանդում կամ սարի ճամբին, իրեն-իրեն միտք ե տնում իր ապագայի մասին. յելք չի գտնում: Մտածում ե բատրակիմի ասածների վրա: Մի կողմը — Փարսադանն ե նրա

մշուշապատ ուղեղում, մյուս կողմը—Բատրակոմը: Շատ
ե մտածում, ինքն իրեն հետ կռիվ տալիս:

«Բատրակոմը ճշմարիտ և ասում, —մտածում ե
Գարսոն. Ո՞վ կամ ի՞նչ եմ յեղել յես Փարսաղանի հա-
մար, մի նոքյար, մի գյաղա, մի բատրակ. բատրակը
լավ ե, գոնե ոռձիկ ել ե ստանում ե, իսկ յես հացփոռ
նոքյար եմ եղել. հագած շորս—Փարսաղանի մաշած ու
հագար կարկատանով շորն ե յեղել, կերածս—նրա
սուփրի ավելցուկը—թերմացքը. ի՞նչ որ ու կյանք եմ
քաշել նրա ձեռին... Մի հալալ տեղաշորի, անկողնի
յերես ել չեմ տեսել: Ամառը—դոշակս*) չոր տափն ե
յեղել, յորդանս**) —յերկինքը, ձմեռն ակոռուսն եմ
քնել, ու շուտ-շուտ քնած տեղիցս վեր թռել, վոր հայ-
վանը կապով չընկնի. կամ շան հաջոցին դուրս եմ յե-
կել, վոր զող չմոտենա գոմին... Հիմի վոր ուղենամ տուն
ու տեղ դառնամ, մի աղջիկ ուզեմ, ո՞ր տանեմ, տուն
չունեմ, տունս հրեն քանդվել, տեղը մի փոս ե մնա-
ցել, վրես շոր չունեմ, տեղաշոր չունեմ, մի կոտրած
ճրագն ի՞նչ ե, են ել չունեմ, թե վառեմ... Արհեստ չգի-
տեմ, ուսում չունեմ, մի որինավոր մարդ վոր հետս
խոռի, չեմ կարող երկու խոսք իրար անեմ, վոր ջու-
ղաբը տամ, միտքս հասկացնեմ: Շապիկս քրտինքից ու
կեղտից կեղ***) ա դառել, վիզս կտրում ե, հորի շալից
կարած շալվարս ոձի քստի նման լաշս քրքրում ե.
մազերս դերվիշի մազերի պես յերկար, մկրատի ու
սանրի յերես չեն տեսել, իրար են խառնվել, թախկել,
կասես սե քեզա****) կամ յափնջու կտոր լինի գլխիցս

*) Ներքնակ:

**) Վերմակ:

***) Կեղ—կեղև, ծառի կեղև:

****) Քեզա—թաղիք:

կալած: Գլուխս տառթակալել ե, ենքան տնծոտել, վոր
յեթե չութով վարեմ, ակոս-ակոս անիծի վարած կը-
դառնա: Ինձ ո՞վ կուզի, վոր աղջիկը թամահ կանի.
ինչի՞ս թամահ անի... տանս, բաղ ու բաղչի՞ս, ապրան-
քիս. . . ինչի՞ս... բորիկ վոտների՞ս, պատռած շալվարի՞ս,
քրքրված արխալուխի՞ս... թե՞ նա յել գա ու դառնա
Փարսաղանի դարավաշը: Ա՛խ, Փարսաղան, Փարսաղան,
յեթիմի կարողութունը տակով անող Փարսաղան»...

Բայց մյուս կողմից ահա Փարսաղանն իր հարըս-
տությամը, կայք ու կարողութունով, վորն աշխարհ,
վորը ծածուկ:

«Պահել ե ինձ,—հակառակն ե մտածում հիմի յել
Գարսոն,—պահել, մեծացրել ե, դա վոր չլիներ, յես
հիմի դռնե-դուռ ընկած, վաղուց մեռած, վոսկրներս
փտած կլիներ, «ոխսը պատան մառած կլիլի»: Մարդը
հոգի ունի, ինձ հո դատարկ դուրս չի անի, ինձ վորդու
պես ե նայել, հիմի յել ուզում ե ամուսնացնի, յերեի
մի տուն կշինի, մի բան ել բաժին կտա իր ունեցա-
ծից. հո չի՞ զրկելու. խղճով մարդ ե. չե՞ վոր յես ել
ազգական եմ, ոտար հո չե՞մ, իմ տունն ու նրա տունն
ո՞վ ե ջոկողը... Բա վոր հետը կովեմ, տանիցը դուրս
անի, ինձ ո՞վ կպահի, կպաշտպանի... Բատրակի՞մը...
նրանք ինչ ունեն վոր... նրանք ել ինձ պես բատրակ-
ներ են, դատարկ, առանց կարողության: Չե՞... ել լաֆե
են ե, Փարսաղանի փեշը բռնած պինդ կենամ տեղս.
բատրակիկոմն ի՞նչ բան ունի, վոր խառնվում ե մեր
գործերին»...

Հաստատ վճռում ե իր մեջ Գարսոն:

Բայց և այնպես Գարսոն ել առաջվանը չե. հիմի
շարունակ տխուր ե, մտադրադ, գիշերները հանգիստ

քուն չունի: Իրեն համեմատում է իր հասակակիցների հետ, իր նման բատրակների հետ: Նրանք մարդ են գյուղում, գյուղ են կառավարում, մեկը նախագահ է, մյուսը կոմիտեի քարտուղար, մի յերրորդը ՓՈԿ-ի նախագահն է, կոլլեկտիվի վարիչն է... Ինքն ինչո՞վ է պակաս նրանցից. ուժո՞ւմ, խելքո՞ւմ, աշխատասիրութեամբ, բո՞լ ու բուսածո՞ւմ, շենք ու շնորհքո՞ւմ... Ձե՛... Գարսոն ամեն բանով նրանց հավասար է, միայն... անգրագետ է, «գրի սեն ու սխալտակը չի ջոկում»... Ա՛խ... հուժում, հուժում...

Ու Գարսոն կտրուկ կերպով վորոշեց մտնել լիկկայան և գրագիտություն սովորել:

Փարսաղանին դուր չեկավ այս բանը: Նա ամեն մի խոչընդոտ հարուցեց, վոր Գարսոն դադարի լիկկայան հաճախելուց: Փարսաղանը գիտեր, թե յերբն սկսվում լիկկայանում պարապմունքները: Նա ամեն անգամ մի գործ էր գտնում, վոր Գարսոն բացակայի. ուրիշ գյուղ էր ուղարկում, կամ գյուղից հեռու գտնվող գոմերն էր ուղարկում, վոր ապրանքից մի լուր բերի, կամ մի այլ բան էր հնարում:

Գարսոն մի անգամ զուսպ տրտունջ արտահայտեց. Փարսաղանը դալրացավ, սպառնաց տանից դուրս վռնդել: Գարսոն իր կսկիծը հայտնեց բատրակի մի անդամներից մեկին:

— Քեզ վոր ասեցինք կոլլեկտիվ պայմանագիր կնքի՞, ինչո՞ւ չլսեցիր, — պատասխանեց նա:

— Լսվ, ետ պայմանագիր ասածդ, ինձ գիր կսովորեցնի՞, — առարկեց Գարսոն:

— Բա նոր գիտե՞ս... Ետ պայմանագրով, դու իրավունք կունենաս շաբաթվա մեջ մի որ բոլորովին գործից ազատ լինելու և հանգստանալու, հետո փարսաղանը կպարտավորվի քեզ ազատ թողնելու, վոր դու

հաճախես լիկկայանի պարապմունքներին և անգրագիտությունդ վերացնես:

Ելի շատ ուրիշ որինքներ բացատրեց. բատրակի մի անգամը, շատ բաներ պատմեց խորհրդային իշխանության մասին, բատրակների իրավունքների և արտոնությունների վերաբերյալ, մի խոսքով: Բոլորովին մի նոր աշխարհ բացեց Գարսոնի առաջ:

Գարսոն, վոր մի քանի գիր էր սովորել արդեն, գիրքը շարունակ ծոցումն էր պահում: Հենց վոր մի քիչ ազատ ժամանակ էր ունենում, իսկույն բաց էր անում գիրքը, նայում սովորած տառերին, ապա թերթելով տարակուսում, վոր մյուսներից վոչինչ չի հասկանում: Նրա միտքն այժմ զբաղված է կոլլեկտիվ պայմանագրով:

«Շաբաթվա մեջ մի որ ազատ», ասաց բատրակի մի անգամը, «Փարսաղանն իրավունք չունի արգելելու, վոր հաճախես լիկկայանի պարապմունքներին», «կոլլեկտիվում կգրվես», «մենք կառնենք քեզ հասանելիքը Փարսաղանից», «քեզ համար տուն ու տեղ կդառնաս, մարդավարի կապրես», «դու սաղ Փարսաղանի տունը շաղկած ման ես ածում, բա քեզ համար չես կարող աշխատե՞ս», «Գյուղբանկից փող կվերցնես, վոր տնտեսությունդ կանոնավորես», «Խորհրդային իշխանությունը մեր իշխանությունն է», «Քեզ առաջ կքաշենք, կմտնես կուսակցության մեջ, կդառնաս կոմիտեի անդամ, ետեղ շատ բան կսովորես»...

Գարսոն այժմ ավելի հաճախ է լինում բատրակի մոտ. նա միշտ անգամ մի որ գնաց ընթերցարան: Այնտեղ լրագիր էր կարդում խրճիթվաբլ, բացատրում անհասկանալի տեղերը: Գարսոն այժմ չի քաշվում

Լավ տղա յե խրճիթվարը, բայց ի՞նչ բան ե «դասակարգային գիտակցությունը», վորից վոչինչ չի հասկանում Գարսոն: Վոչինչ, կիմանա, խրճիթվարն ասեց, վոր Գարսոն մի ազատ ժամանակ զնա նրա տունը, նա կբացատրի:

VI

«Ա՛յ, սիկ, սիկ, վա՛խ, սիկ, սիկ,
Զա՛ն, սիկ, սիկ, սկո՛ւր,
Առանց քեզ չեմ կարող—
Յեւ ապրեմ մեկ ուր»...

Խնճուշք ե ֓արսաղանի տանը, ուրախանում են
ու յերգում, յերգում են ու կենացներ խմում: Ձմեռը
նոր ե սկսվել: Ճյուճն ու սառնամանիքը մարդկանց
քշել են իրենց տները: Փարսաղանն այդ յերեկո բաց ե
արել գինու նոր կարասը: Նա հրավիրել ե իր մոտիկ-
ներին, քեֆ ե անում: Մի մատղաշ յերինջ ե մորթել
֓արսաղանը, խորովածի շամփուրները թարմ ու փա-
փուկ մսի հյուլթը սուփրի վրա կթվթեցնելով պտտում
են սեղանի շուրջ նստած հյուրերի առաջով. սառը գի-
նին կլկլալով հոսում ե լիքը շշերից:

«Տկնո՛ր, առանց քեզ խավար ե ուրիս,
վերցնեն գավաթըս, դատարկեն փորըս»:

— Փնտրադան, մենք քո սրտի տեղը զիղանք:
Հես դիմանալու ջիգյարիցդ խեղճ մարդ ես, աբրի, յես

կանչի Գարսոյին, ջահել ա, շաշացրել են,—տրամադրութիւնը փորձելու համար, առաջարկում ե հյուրերից մեկը, վորի կատարը գինուց տաքացել ե:

— Թող գա ձեռս ու վոտս պաչի, մորը գերեզմանի վրիցը մի բուռ հող բերի բարեխոս, ու գա ապրի իր տանը: Կոլլեկտիվ պայմանագիր ա ուզում. են վոր գլուխը չոր քարին եր ֆնացել, պահող չկար, կոլլեկտիվ պայմանագիր կապեցի նրա հետ. վոր բերի իմ տուն, հացիս թիքեն կես արի հետը...

— Գինի ածա, գինի. նրա մասին ել խոսալ միք, սրտիս վրա ոխտը դադ քաշեց:

«Տկնո՛ւր, գրկումս կպահեմ նազով,
կկնծեմ գինին—գալաքով, պոզով»:

Քեֆը քանի գնում տաքանում ե: Փարսադանը գյուղի աշուղին բերել ե տվել: Աշուղը սազը դռին, զարկում ե ժանգոտած լարերին, վորոնք դժգոհությամբ ժնգժնգում են, իսկ ինքն ել ճղված, կամ ինչպես գյուղացիք են ասում—նղկենի ձայնով յերգեր ե յերգում, գովում Փարսադանին, նրան քաշիք անում:

Աշուղը յերգում ե «Շահ-Իսմայիլ»-ից, «Քյոռուղ-լուց» կամ նման ֆանտաստիկ, սիրային արկածներով լի հեքյաթ—լեզենդներից:

*
*
*

Կոմբլիի ե բատրակկոմի խառը նիստն եր այդ յերեկո: Նիստն արտակարգ եր. որակարգում մի հարց կար միայն, դա—Գարսոյի հարցն եր:

Լսեցին բատրակկոմի նախագահ Մուսինի ղեկուցումը, լսեցին նաե Գարսոյի կյանքի ամբողջ պատ-

մությունը: Արտահայտվեցին ամենքը ե միաբերան պահանջեցին դատի տալ Փարսադանին: Դիմումը կազմեց խրճիթվարը ժողդատարանի անունով: Գարսոն զիմումի տակ հաղիվ չանգոեց իր անվան տառերը: Վորոշեցին վաղն եկթ դիմումը խառը նիստի վորոշման հետ միասին ուղարկեն շրջանային ժողդատավորին:

Իսկ վճրտեղ ե ինչպես պետք ե ապրի Գարսոն: Զանադան առաջարկներ յեղան, վերջում ընդունվեց Մուսինի առաջարկը, վոր Գարսոն ապրի դպրոցին կից փոքրիկ սենյակում, ուր այժմ վառելափայտն ե գարսած, իսկ անկողին ու այլ հարմարութիւններ իրենք կստեղծեն: Գարսոն կդառնա դպրոցի ծառայողը. կըմաքրի դասարանները, վառարանները կվառի, ե այլ գործեր կկատարի. ամսական կստանա քսան ուլլի ոտճիկ, մինչև վոր դատարանը կորոշի Փարսադանից ստանալիք իր բաժինը ե գարնանը կմտնի կոլլեկտիվ տնտեսության մեջ:

— Մի վախիլ, սոված չես ֆնա, — ասաց Մուսին, — մենք քեզ կպահենք ու կպաշտպանենք: Միտող պինդ պահի, ես գիշեր մեր տանը կքնես, եզուց քու տունը կսարքենք:

Ժողովը ցրվեց, ու յերբ Գարսոն ու Մուսին գյուղից խոտ փողոցով սոթ տալով գնում եյին Մուսինի տուն, Փարսադանի տանից լսվում եր զինու յերգի ձայնը:

«Ո՛վ գինի, քե վոր քեզ խմի ավանակ,
ձարսասն կըլնի անքուղը, անքանա՛ք...»

— Յերգի, յերգի Փարսադան, — ասաց Մուսին, — հրես քու ծվանն ել կկտրենք:

Առավոտը լույսը բացվելուն պես, Գարսոն իր դիմումը ժողդատարանին, և յերեկոյան խառը նխառի վորոշումը ծոցը դրած, վազում եր շրջանի կենտրոնի գյուղը:

Այդ որը գյուղում ամենքի խոսակցութեան նյութը Փարսաղանի ու Գարսոյի միջադեպն եր: Գյուղի ճնշող մեծամասնութեան կարծիքը Փարսաղանի կողմն եր: Խայտառակում, անվանարկում եյին Գարսոյին, վոր Փարսաղանի տանը կերած աղ ու հացը վորտի տակ և տվել: «Անաղուհաց քրդի շուն» և Գարսոն, վոր յերբեմն իր տիրոջն ել և կծում: Կային նաև Գարսոյին կողմնակիցներ, բայց նրանք անձնական հաշիվներ ունեյին Փարսաղանի հետ, վորի պատճառով և լռեցնում եյին նրանց, մատնանշելով այդ հանգամանքը:

Կոմբջիջի և բատրակկումի անդամները չեյին խառնվում այդ խոսակցութեանը, նրանք իրենց ասելիքը կասեն ժողդատարանում:

Գյուղացիները հավաքվել են դպրոցի շուրջը: Այնտեղ, Մուսինի գլխավորութեամբ, բատրակկումի ու կոմբջիջի անդամները դատարկում են սենյակը, վառելափայտը բարձրացնում, դարսում դպրոցի տանիքում: Գյուղացիների հարցին կատակով պատասխանում են, թե Գարսոյին հարսանիք են անելու, դրա համար ել տուն ու տեղ են սարքում:

Շուտով մե թախտ բերին, անկողին բերին, սեղան ել դրին յերկու տարուրետով, կոտպերատիվի վարիչը մի լամպ ու յերեսուրբիչ նվիրեց. հյուսն Արտաշը մի փոքրիկ փայտե սնդուկ բախշեց. բրուտ Գևորգը մի փարչ ու մի կուլա բերեց, դրեց սենյակի անկյունում, վարժուհիներից մեկը մի թեյաման գնեց, իսկ մյուսը

յերկու բաժակ-ափսեներով. կոմբջիջի ու բատրակկումի անդամների վոմանց կանայք, վոմանց ել մայրերը միմի տփսե մրգեղենով լի, վրան ել մի գուլգ գուլպա դրած նվեր բերին, դպրոցի աշկումը իր միջոցներից մի թիթեղյա վառարան գնեց, դրեց սենյակում ու վառեց, լիկկայանի վարիչ ընկեր Արմենուհին մի պլակատ կպցրեց պատիցը:

ԳԱՐՍՈ՛, ՎԵՐԱՅՐՈՒ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԴ

Խրճիթվարն ել իսկույն մի ուրիշ պլակատ գրեց և կպցրեց մյուս պատին:

ԲԱՏՐԱԿ, ԿՆՔԻՐ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Գարսոյի սենյակը պատրաստ ե: Տաք ե, լուսավոր, կոկիկ ու դուրեկան:

Բա մի գյուղ չի կարող մի գրկված Գարսո պահի՞... Կպահի, լավ կպահի...

Իսկ ուր ե ինքը, Գարսոն. չի յերևում: Խոսում են ու այս ու այն կողմ աչք ածում: «Յերևի իր արարից ամաչում ե»—ասում են վոմանք:

Փարսաղանն ել և գյուղամիջում. գիշերվա քեֆից հետո նա յերեսն ուռած, աչքերը կարմրատակած, հոնքերը կիտած լուռ կանգնած ե: Հետաքրքրվողների հարցերին միավանկ բառերով և պատասխանում, չութանի զամփռի պես ընթացնելով, կամ լեզուն ատամների փոխարինելով ձլփցնում, վերի շրթունքը բարձրացնելով: Տխուր ե. զգում ե թե ինչ վոր բան և կատար-

վում, բայց չի կարողանում հասկանալ, թե ինչով և վերջանալու: «Կոմբլիջը վոր խառնվել և գործին, կարող և իրեն ֆլաս հասնի»,—մտածում և նա:

Գարսոն յերևաց գյուղի ծայրին: «Վճրտեղից և գալիս ետ սևերեսը»,—խոսվում և Փարսաղանի սիրտը մտատանջությունից: Գարսոն յեկավ, նրա դեմքը պայծառ և:

— Մուսի ջան, դատավորն ասեց գործը շուտով կքննենք,—գեռ Մուսինին չհասած ուրախ բացականչում և Գարսոն:

Փարսաղանի գլխին կարծես թոխմախսվ զարկեցին: «Ուրեմն ետ լակտը դիմում ա տվել դատարանին»,—մրթմրթում և Փարսաղանը և մուշտակը վրեն քաշելով՝ համբաքայլ հեռանում դեպի տուն:

Գարսոն մտնում և ներս, իր սենյակը: Նա դարմացած և, շմած, ուրախությունից քիչ և ֆնում արտասվի: Փաթաթվում և Մուսինի վզովը: Արցունքները կոկորդում հուպ տալով՝ թնթկոտում և ու ասում.

— Մուսի ջան, ախպեր ջան, ել յեթիմ չեմ, յես ձեր հոգուն մատաղ, վոր սև որըս եսպես պայծառ արիք:

— Բա վճնց գիտեցիր, մեր իշխանության որով ել, վոր դու պայծառ որ չտենաս, ել յե՛րբ ես տեսնելու, հո գերեզմանումդ արև չի՞ դուրս գալու... Արի, արի գրանք մեզ մոտ, սոված կըլես, հաց կեր, հետո շատ կխոսենք, առաջարկում և Մուսին:

— Ես բանը տեսողի բողաղոմի ել հաց կուլ կգնամ... վոր մեռնեմ ել, դարդս չի, ես որը վոր տեսա, կգնամ մեռելներին խաբար կտամ, իմ ուրախությունը կպատմեմ... Յերեխայի պես հեծկլտում և Գարսոն:

Գարսոյի համար նոր կյանք և սկսվել: Նա սովորել և իր նոր աշխատանքին: Ամեն որ դասերը վերջանալուց հետո մաքրում, համարյա «լիզում և» դպրոցի հատակները, խակ առավոտները վաղ, նա թաց լաթը ձեռին մաքրում, սրբում և գրասեղանների ու նստարանների վրայից փոշին: Գրասեղանները կարծես ձիու քուռակներ լինեն, ետպես և պատկերացնում իրեն Գարսոն, վորոնց սովոր եր նա թիմարելու կամ մեջքները սղալելու, Փարսաղանի գոմում: Ծիշտ և սրանք ձեն չեն հանում, չեն շարժվում, բայց սրանք ել իրենց լեզուն ունեն, գրի իմաստուն լեզուն:

Գարսոն առաջին օրերը տխրում եր հաճախ մեռնակությունից: Ծիշտ և նա միշտ ել մենակ և յեղել, բայց մոտը շարունակ մի կենդանի արարած քայլելիս և յեղել, բառաչելիս, կամ գլուխը թափահարել և, թե հարու տա, կամ՝ վոտը բարձրացրել, թե քացի տա: Բայց հետզհետե այս բանին ել սովորեց, մանավանդ վոր Գարսոն այժմ տարվել և գրով:

Ձմեռվա յերկար գիշերները, յերբ վողջ գյուղը մրափում և քնի մեջ, խավարում կորած գյուղի կենտրոնում, լուսատուիկի նման մի ճրագ և փայլում. դա—Գարսոյի լամպի լույսն և, վորի առաջ, սեղանի մոտ, տարուրետի վրա նստած, գլուխը կախ, մեջքը կռացած՝ իր դասն և սերտում Գարսոն: Նա արդեն այբբենարանը վերջացնելու վրա յի, շուտով կսկսի գրքեր ու լրագրեր կարդալ: Նա վորոշել և անպատճառ գրի առնի իր կյանքի պատմությունը, մի մեծ գիրք շինի, վոր ուրիշներն ել կարդան, իմանան ու հեռու կենան Փարսաղանի պես

«սրտացավ» բարեկամից, ուժ տան բատրակկոմին... Յեւ այսպես հազար ու մի մտքեր են պաշարում նրա նոր արթնացող ուղեղը:

Ապա նա իրեն յերևակայում է ժողդատարանում, Փարսաղանի դեմը կանգնած: Նա պահանջում է իր հալալ քրտինքի վաստակը, իր կորցրած տուներ, այգին, պարտեզը, իրենց տան մեջը—խալիչաներից սկսած մինչև սովորական կալի ու գոմի գործիքները: Դատարանը վորոշում է Փարսաղանից մի լավ տան բաժին առնել տալ Գարսոյին, բայց Գարսոն հարստանալու յետեից չի, նա միայն ուզում է պատժել Փարսաղանին, և իր ամբողջ բաժինը մտցնել կոլլեկտիվ տնտեսության մեջ: Չե՞ վոր բատրակկոմի բոլոր անդամները կոլլեկտիվ տնտեսության մեջ են, նրանք եյին վոր Գարսոյին ևս տեսակ բախտի արժանացրին, մարդամեջ գցեցին: Նիմի մաքուր է ապրում, գոմում քնելուց ազատվել է, մաքուր անկողին ունի, զբաղեւոր է համարյա...

Փարսաղանը տեղեկացել է ամեն բան. նա գիտեւ, վոր խորհրդային դատարանը պաշտպանելու յե Գարսոյին: Սկզբում կարծես բանի տեղ չեր դնում կատարված անց ու դարձը, բայց հետո զգաց, վոր դատարանը շատ ավելի կարող է պահանջել իրենից, հոգուտ Գարսոյի, քանը ինքը կարող է յերևակայել:

Գարսոն, իհարկե, չի յել մտածում Փարսաղանի տուն դառնալու մասին. նա արդեն իր համար տուն ու տեղ է դարձել:

Մի քանի որ շարունակ, հենց վոր մթնում է, Գարսոյի մոտ է գալիս տերտերը: Առաջին որը, նա հենց

ենպես «զրից անելու» համար եր յեկել, մտածելով, թե «Գարսոն մենակ է, տխուր կլինի»: Այդ որն ըստ սովորականի, նա խոսեց Գարսոյի մեռելներին—հոր, մոր ու քրոջ մասին, հիշեցրեց, թե ինչպես նրա մայրը մեռնելուց առաջ կանչել է իրեն ու կտակել, վոր Փարսաղանին համոզի, Գարսոյին իր մոտ վերցնելու: Տերտերի ասելով, ինքն անգին աշխատանք է թափել, վոր Փարսաղանին համոզել է այդ բանում: Պատմությունը դարձավ Գարսոյի ու Փարսաղանի արենակցական—ազգակցական կապի շուրջը:

Յերկրորդ ու յերրորդ որը տերտերը հարցն ավելի պարզ դրեց. այն է՝ վոր Գարսոն հաշովի Փարսաղանի հետ: Սակայն տերտերի համար միանգամայն անսպասելի յեղավ, յերբ այնքան քարոզներից հետո յել Գարսոն հայտարարեց.

— Յես հիմի իմ գլխի տերը չեմ, իմ գլխի տերը յաչեյկան ու բատրակկոմն ա, թե նրանք համաձայնվեն, յես լեզուս պոնգովս չեմ ունի, ծպտուն չեմ հանի:

— Դու «հա» ասա, — առաջարկեց տերտերը, — նրանց համոզելը մեր պարտքը:

— Թող նրանք «հա», ասեն, իմ համոզվելն իմ պարտքը, — առարկեց Գարսոն:

Պարզ եր, վոր բանը հեշտությամբ գլուխ դալու չեր, իսկ վոր գլխավորն է, խրճիթվարն իմանալով Գարսոյից այս պատմությունը, բատրակներին մեջ պարծանքով հայտարարեց.

— Տեսնում եք, ընկերներ, թե ինչպես շուտ մեր Գարսոն դասակարգային գիտակցության ճամբեն բռնեց...

«Ուրեմն... մտածում է Գարսոն ինքն իրեն, դասակարգային գիտակցություն ասածդ ես տեսակ բան ա,

էլի, աշխնքն՝ թե բատրակ ես, բատրակների հետ կաց, նրանց խոսքով դնա»...

* *

Ձայնազուրկների ցուցակը կազմելու հրահանգ եր ստացվել կենտրոնից. խորհուրդների վերընտրությունների կամպանիան սկսվելու վրա յեր: Փարսաղանի ամենամեծ ցաֆն ել հենց այն եր, վոր հաշտվի Գարսոյի հետ, վորպեսզի մի փոքրիկ պատճառ ել ե չլինի, նրա ձայնի վերականգնման հակառակ:

Ձաջողվեց:

Ցուցակների ստուգման ընդհանուր ժողովն ե գյուղում: Դպրոցի մեծ դահլիճը ծայրե-ծայր լիքն ե յերկսեռ հասարակությամբ: Վոմանք յեկել են, վոր աշխատեն իրենց ձայնը վերականգնեն, վոմանք ել յեկել են, վոր իրենց ասելիքն ասեն այս կամ այն ձայնազուրկ անելիքի մասին:

Փարսաղանը համոզված ե, վոր այս անգամ իր ձայնը վերականգնելու յեն: Իսկ յեթե խոսք բացվի Գարսոյի մասին, նա հասարակության առաջ հանդիսավոր խոսք կտա լիովին բավարարելու: Նա ժողովում չի առարկի, կասի վոր պարտական ե Գարսոյին, իսկ հետո... հետո մի բան կանի, ելի...

— Սողոմոնյան Փարսաղան... լսվում ե նախագահի ձայնը.— ես մարդը ձայնազուրկ ե, դիմում ե ասել, վոր վերականգնենք. ով ինչ ունի ասելու:

— Ի՞նչ պետք ա ասենք, դա յել մեզ պես մի ռանչպար մարդ ա, իր վար ու ցանքին, հալալ աշխատանքին,— առաջարկում ե մեկը:

— Գեղի համար ոգուտավոր, ոգտակար մարդ ա, ամեն տեղ, ամեն բանի ժամանակ ձեռք ա բռնում

քյասիբին. դրա դռնիցը դատարկ ձեռքով յետ գնացող չի յեղել, ձայնը հաստատեցեք,— կրկնում ե մի ուրիշը

— Ես սաղ գեղումն ինչքան հիվանդացող կա, դրա խաղողովն ա լավանում, ամենքին ել տալիս ա, անփող, անհախ, դրուստ չեմ ասում, ա խալիս... ձայնում ե մի յերրորդը:

Խալիսը «հա, հա», «դրուստ ա, դրուստ ա» յե ասում:

— Դա վոր չլի, ես գեղը մենակ ձմերուկի, նոթի, մագուլթի ու աղի համար տարեկան են պակասը-պակասը, յերկու հարյուր մանեթ տանուկ կտա,— ձայնը հաստատեցեք,— ավելացնում ե չորրորդը:

— Սրտացավ մարդ ա, բարեհոգի, մեկին կաշի յա բախշում, մեկին միս, շատ անգամ ել քյասիբ մարդու հարսանիքին գինի յա տալի, հրեն դպրոցում սովորող հինգ քյասիբի համար գիրք ու տետրակ ա առել, բա վոր դրա ձայնն ել չհաստատենք, ել ում ձայնը հաստատենք,— մեջ ե ընկնում հինգերորդը:

— Հաստատենք, հաստատենք... լսվում են այս ու այն կողմից ձայներ:

— Ուրեմն ասում եք վերականգնենք Փարսաղանի ձայնը,— առաջարկում ե նախագահը:

— Այո, այո, լավ մարդ ա, մեր գեղի պաշտպան մարդ ա...

Ամենքի տրամաբրությունն ել Փարսաղանի կողմն ե կարծես: Փարսաղանը ժպտում ե, նրա դեմքը վայլում ե ուրախությունից, մի խոսք ես նախագահողի կողմից, թե «քվեարկում եմ» ե Փարսաղանի իրավունքները վերականգնված են: Նա մինչև անգամ զարմանում ե, վոր Գարսոյի միջադեպի մասին խոսք ասող չկա: Բայց...

Հանկարծ դահլիճի խորքից ձայն ե խնդրում ինքը՝
Գարսոն:

— Ընկեր նախագահ, խնդրեմ ինձ ձայն:

— Գարսո, խոսիր:

Փարսաղանը տեղից վեր ե կենում և առանց ձայն
խնդրելու, հայտարարում.

— Ա՛ խալիս, դուք գիտաք, վոր իմ ու մեր Գար-
սոյի մեջ մի փոքր թյուրիմացութիւն ա պատահել յես
գիտամ, թե նա ինչ պետք ա ասի: Յես ես հասարա-
կության մեջ, ամենքիդ առաջ խոսք եմ տալիս, վոր
նրա ամեն պահանջին լի ու լի բավարարեմ, ինչ վոր
դուք կվճռեք, թե ուզում եք հենց հստեղ, լեզվիցս
թուղթ տամ, ստորագրեմ, վոր ինչ վճիռ կայացնեք,
անխոս կատարեմ:

Մի քանի հոգի ծափահարում են: «Ե՛սքան ել
խղճով մարդ»... ասում են այս ու այն կողմից:

— Գարսո, ել խոսալ մի... ձայնում են ամեն
կողմից, բայց Գարսոն չի զիջում, նա պահանջում ե,
վոր ձայն տան:

Տալիս են:

— Առաջինը, յես պետք ա ձեզ ասեմ, վոր իմ
խոսքը Փարսաղանից բան պահանջելը չի, ետ դատա-
րանի գործն ա: Յես ուզում եմ մենակ է՛ն ասեմ, վոր
դուք վոչինչ չգիտեք Փարսաղանի արարքներից: Ե՛ն
ձմերուկները, վոր բերել են, Փարսաղանն եր առել,
ինքն ել սուտ զալմաղալ եր անում, վոր ձեր աչքին
լավամարդի դառնա. ձմերուկն ել հո գիտաք, վոր խալ
եր: Ես մին: Նոթը, մազութն ու աղն ել եր Փարսա-
ղանինը: Նա ենքան պտիտ եր գալի կոռպերատիվի
չորս բոլորը, վոր իմանա, թե ինչ ապրանք ա պակաս,

ինչ ապրանք ուշ ա ստացվելու, և ինքն առնում եր ու
թուրքերի ձեռով ծախում, գնի մեջ զալմաղալ անելով,
վոր ձեզ մոտ լավամարդի դառնա ու ետը ձայնը հաս-
տատենք: Ես ել երկու...

— Անձնական հաշիվ ա...

— Սուտ ա...

— Փարսաղանն ետպես մարդ չի...

Հասարակության մեջ իրարանցում ընկալի, առա-
ջարկ յեղալ Գարսոյին ձայն չտալ շարունակելու իր
խոսքը, բայց յեղան նաև կողմնակիցներ, գլխավորա-
պես կոմյերիտականներ ու բատրակներ, վորոնք պաշտ-
պանեցին, և Գարսոն շարունակեց.

— Եստեղ անձնական հաշիվ չկա, ինչքան վոր
հիվանդի համար խաղող ա բաց թողել, երկու ենքան
հալ ու ձուտ ա մտել նրա հովանոցը, իսկի խաբար Լք...
Տավարը մորթել ա, կաշին մենակ սովարի գինը հա-
նել ա, միսն ել աշխատանք, դե, հալբաթ վոր լավու-
թյուն կաներ... գինու մասին ել ասելիքս շատ ա, համա
ել չեմ խոսում, հասկացողին եսքանն ել բոլ ա:

Գարսոն լռեց:

Ժողովականների վրա կարծես սառը ջուր մա-
ղցին:

— Ի՞նչ կասես ես մեղադրանքների դիմաց, Փար-
սաղան,— առաջարկեց նախագահողը:

Փարսաղանը տեղից վեր կացալ, մուշտակը հա-
զալ, հազաց ու խղիւժ ձայնով թե՛

— Ել ի՞նչ ասեմ, ծառի վորդն իր միջիցը կըլի...
թե սաղ միամ, Գարսոյի ջուղաբն ուրիշ տեղ կտամ...

Ասաց ու դուրս եկալ ժողովից:

Փարսաղանը մնաց ձայնազուրկ:

Սակայն ցավը միայն այդ չէր: Յերբ Փարսաղանը ժողովից հեռանալով՝ գյուղի միջով անցնում էր բարձրաձայն սպառնալիքներ ուղղելով Գարսոյի հասցեյին, նրան մոտեցավ գյուղի կատարածուն ու մի թուղթ դեմ արավ:

— Փարսաղան դայի, ստորագրի, վոր ստացար: Փարսաղանը կանգ առավ, թուղթը շուռ ու մուռ տվեց ու կարդաց վանկելով.

Ծա-նու-ցա-գիր...

Ժողդատարանի ծանուցագիրն էր, վորով Փարսաղանին առաջարկվում էր յերկու որից ներկայանալ ժողդատարան, վորպես պատասխանատու, «ըստ հայցի Գարսո Բեգլարյանի»:

Փարսաղանը ծանուցագիրն ստորագրեց, իր մասը դրեց գրպանը:

Ի՞նչ է ասելու ժողդատարանում...

— Դրուստ են ասել, թե մի ցավը մարդ չի սպանիլ... խռոված սրտով իջավ դեպի տուն Փարսաղանը, ավելացնելով.

— Դե, արի ու որես դենը մարդու լավություն արա...



907

«Ազգային գրադարան»



NL0402015

8200

ԳԻՆԸ 30 ԿՈՊ

